«ԿՈՏԱՅՔԻ ԵՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԿԹԿ» ՍՊԸ

"KOTAYKI EV GEGHARKUNIKI KKTK" LLC

Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան,
Կենտրոն թ., Սահմանադրության հր. 1
ՀՎՀՀ 03021779
swmckg@gmail.com
Հեռ. +374 99 188 088

«01» Հուլիսի 2025թ.

N 01/0701

ԱՁ «Վարդուհի Աբրահամ Թովմասյանց» -ին
Հասցե՝ 2502, ք. Չարենցավան 8-րդ թղմ,10-րդ շենք, բն. N 5
Փաստաթղթի գործունեության հասցե՝ 5-րդ թղմ.,շենք 17
ՀՎՀՀ 40649637
էլ հասցե՝ vtovmasyanc@mail.ru հեռ՝098-39-30-60

Ծ Ա Ն Ու Ց Ու Մ
/Պայմանագիրը միակողմանի ամբողջական լուծելու մասին/

«Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Գնորդ) և «Վարդուհի Թովմասյանց Աբրահամի» ԱՁ-ի միջև (այսուհետ՝ Վաճառող) 03.06.2025 թվականին կնքվել է N «ԿԳ-ԿԿԹԿ-ԳՀԱՊՁԲ-09/25» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), համաձայն որի՝ Վաճառողը ստանձնել է հանդերձանքի՝ Աշխատանքային համազգեստ, մատակարարման պարտավորությունը (այսուհետ՝ Ապրանք)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի և մատակարարման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.4.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով :

Պայմանագրի N1 հավելվածով սահմանված մատակարարման ժամանակացույցի համաձայն՝ Ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրվա ընթացքում:

Պայմանագրի N1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի համաձայն Վաճառողը պարտավոր էր ապրանքի չափսը, գույները և տպագրույթունը համաձայնեցնել Գնորդի հետ:

Վաճառողը Գնորդին ներկայացրել է ապրանք, որի գույնը համաձայնեցված չի եղել Գնորդի հետ, ինչի մասին Գնորդը համապատասխան եզրակացությամբ նույն օրը տեղեկացրել է Վաճառողին, սակայն վերջինիս կողմից մինչև պայմանագրով սահմանված մատակարարման վերջնաժամկետի ավարտը նոր ապրանք չի մատակարարվել Գնորդին:

Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, **եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի**:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն Գնորդն իրավունք ունի Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Հիմք ընդունելով, որ Վաճառողը խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ համաձայն Պայմանագրի Գնորդը միակողմանի լուծում է N «ԿԳ-ԿԿԹԿ-ԳՀԱՊՁԲ-09/25» ծածկագրով Պայմանագիրը:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորած մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք, որ եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարում է պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Տեղեկացնում ենք, որ Ընկերության կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն ընկերությանը սպասարկող բանկ՝ պայմանագրի և որակավորման ապահովումները Գնորդի «ՎՏԲ-հայաստան բանկ» ՓԲԸ Հ/Հ 16021028648200 փոխանցելու նպատակով:

Հաշվի առնելով վերոգրյալն՝ առաջարկում ենք N «ԿԳ-ԿԿԹԿ-ԳՀԱՊՁԲ-09/25» ծածկագրով գնման պայմանագրի որակավորման և պայմանագրի ապահովումների գումարները փոխանցել Գնորդի «ՎՏԲ-հայաստան բանկ» ՓԲԸ 16021028648200 հաշվեհամարին:

Տեղեկացնում ենք, որ եթե վճարման ենթակա գումարները սույն ծանուցումը ստանալու պահից հաշված 7 /յոթ/ օրվա ընթացքում փոխանցվի նշված հաշվեհամարին, ապա Վաճառողի նկատմամբ չեն կիրառվի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 2-րդ մասով նախատեսված դրույթները:

Հարգանքով՝
Տնօրեն

Սերգեյ Համբարձումյան